

14720



Դ Ֆ Ո Ի Ր Մ Ա Ն Ո Վ

Ա  
Ա  
Բ  
Մ  
Ի  
Դ  
Բ  
Մ  
Ա  
Ն  
Ս

891.71

\$-98

1936

ՏՄԻՆԻՍԻԱ

891.71  
§-98

Դ. ՖՈՒՐՄԱՆՈՎ

19 NOV 2010

# ԿԱՐՄԻՐ ԴԵՍԱՆՏ

Ռուսերենից բարգմանեց ՇՎԱՐԴ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՄՏՈՎ-ԴՈՆ — 1936

10457

06.09.2013

19920

0005 VIKI 2 1

ՀԱՅԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



3409  
41



Գ. ՖՈՒՐՄԱՆՈՎ,





Աշնան դեմ, 1920 թվի ոգոստոսին Վրանգելը Ղրիմից  
Կուբան ուղարկեց իր մի քանի հազար լավագույն զոր-  
քերը: Այդ զորքերի հրամանատարն էր Ուլագայը — Վրան-  
գելի մերձակա զինակիցներից մեկը: Զորքերի փոխադրման  
նպատակն էր ապստամբեցնել Կուբանի կազակութիւնը  
խորհրդային իշխանութեան դեմ, տապալել նրան և սկսել  
ծովի վրայով հաց փոխադրել Ղրիմ: Սպիտակ գետանտն  
ափ դուրս յեկավ Ազովի ծովափի յերեք կետերում և իս-  
կույն, ազատ կերպով, արագ առաջ շարժվեց, համարյա  
չհանդիպելով արգելքների, գրավելով ավաններն իրար հե-  
տեվից, հետզհետե ավելի մոտենալով մարզի սրտին —  
Կրասնոդարին:

Հուզվեց, ալեկոծվեց Կուբանը: Հանդես յեկան Զ-րդ  
բանակի զնդերը, շտապ կազմված կամավորների ջոկատ-  
ները: Այդ անհանգիստ որերին միայն Կրասնոդարը սվեց  
վեց հազար բանվոր կամավորներ: Ուլագայի դեսանտը  
քայլում էր հաղթականորեն և որավուր սպասում էր, թե  
կազակութիւնը կապստամբի և հազարներով, տասնյակ  
հազարներով, ստեղծելով պարտիզանական ջոկատներ,  
կմիտնա իրեն, կոզնի հարձակվելու Կարմիր բանակի թի-  
կունքները, ավերելով և վոչնչացնելով նրանց: Քայց այդ-  
պիսի բան չպատահեց: Կուբանի կազակութիւնը տանջվե-  
լով քաղաքական պատերազմի յերկար փորձանքներից, հա-  
մոզվելով Կարմիր բանակի իսկական ուժի, խորհրդային  
իշխանութեան հզորութեան մասին, չէր հավատում Ուլա-  
գայի ձեռնարկած քայլի հաջողութեանը, հանգիստ էր մնում

և նրան ոգնության չեր հասնում: Ճիշտ է, ունևոր կազակները սրտովը չեր պարենային մասնադրումը, սրտովը չեր ազատ աւետարի արգելումը, բատրակ — աշխատավորները անխիղճ շահագործման արգելումը, բայց մինչև անգամ այդ դժգոհության՝ դեպքում ել հարուստ կազակները չեյին համարձակվում դուրս գալ խորհրդային իշխանության դեմ, ինչպես դուրս յեկան նրանք վերջինիս դեմ 1918 թվին: Բայց և այնպես սպիտակ դեասնտի փտանդը մեծ էր: Հարկավոր էր շտապել նրա առաջխաղացումը դադարեցնել, իսկ հետո հարվածել և վտարել...

Ոգոստոսի 20-ի ուրը թշնամին գտնվում էր մարզի կենտրոնից — Կրասնոդարից ընդամենը 40 կամ 50 վերստ հեռու: Չեռք առնվեցին մի շարք շտապ միջոցներ: Այդ միջոցների մեջ էր մտնում Կուբան և Պրոտոկա գետերով կարմիր դեասնտ\* ուղարկելը թշնամու թիկունքը, Կրասնոդարից 150 վերստ հեռու, Նովո-Նիժեստբելևսկայա ստանիցի կողմը: Այն ժամանակ այդտեղ էր գտնվում սպիտակ դեասնտի հրամանատար գեներալ Ուլազայի շտաբը:

Կարմիր դեասնտի պետ նշանակվեց ընկեր Կովտյուխը\*\* և կոմիսար նշանակեցին ինձ:

Մեր խնդիրն էր, թշնամուն թիկունքից հանկարծակի շեղտակի հարված հասցնել, խլել նրանից հարձակման նախաձեռնությունը, խուճապ առաջացնել, քանդել բոլոր պլանները:

Գործողությունը հաջողվեց:

Կուբան գետի վրա, նավահանգստում կանգնած էյին յերեք նավ. «Իլյա պրորոկ», «Իլագոդետեյ» և «Գայդամակ»: Նավակներն անպետք էյին, հին, ծանրաշարժ, մի ժամում զոռով անցնում էյին յոթ — ութ վերստ: Այդ նա-

\* Դեասնտ — զորամաս, վորը դուրս է հանվում ափը թշնամու վերքերը:

\*\* Ընկեր Յեպիֆան Կովտյուխը Տամանյան հայտնի բանակի հրամանատարն էր, վորը 1918-19 թվի քաղաքացիական կռիվներում կարողացավ դուրս բերել իր բանակը Հյուսիսային Կովկասի սպիտակ զվարդիական շրջափակից: Ընկեր Կովտյուխը հանդիսանում է Ալեքսանդր Սերաֆիմովիչի «Յերկաթե հեղեղ» գրքի հեռուը Կոմուլի ազգանունով: Ընկեր Փուլբանովը հանդիսանում է «Չապայիվ» գրքի հեղինակը և նույնանուն կենտնկարում ցուցատրվող կոմիսարը: (Թարգմ.):

վերի և չորս բարկասների վրա պետք է ուղեվորովեր մեր կարմիր դեասնտը թշնամու թիկունքը:

Ամբողջ ուրը մինչև յերեկո գետափում տիրում էր անսովոր աշխուժություն. մի քանի ժամվա ընթացքում պետք էր հավաքել կենդանի ուժ, զինվել, պարենեղենի պաշար տեսնել, ինչ վոր կարելի էր — վերանորոգել... Մոտեցան ավտոմեքենաները, արշավեցին հեծյալները, բերին հրետանին, և մարդիկ սարսափելի ազմկում էյին, քաշ տալով նրան ավազոտ վայրեջքում: Ռազմական սայլակները դրդրդյունով ու ցնցումով մտնում էյին բազմախոս իրարանցումի մեջ, բարձած հաց, կեր, ուումբեր: Ինչ վոր մեկի անլսելի հրամանով մոտ էյին վազում կարմիր բանակայինների խմբերը, աշխուժորեն մեջքերի վրա էյին առնում ծանր պարկերը և աղեղի պես կորանալով ճոճվում էյին գետի սանդուխքների վրա, կորչում էյին նավերի բերանաբաց մութ անցքերում... Ռումբերի արկղները վերցնում էյին յերկ-յերկու մարդ, իսկ ավելի ծանրերը — չորս-չորս մարդ. կամաց հանում էյին, կամաց տանում, կամաց իջեցնում գետին, այդպես էր հրամանը. «ոումբերը չձգել»: Բայց արդեն հացի գնդերով բավական զվարճացան: Գրնդակի պես ձգում էյին նրանք ձեռք-ձեռք, աշխատում էյին ճարպիկությամբ և արագությամբ գերազանցել իրար: Իսկ յերբեմն էլ այդ գնդակները լավ հարված էյին հասցնում մի վորևէ դանդաղաշարժ բերանբացի և նրա գլխի վրայով անցնում էյին հեռավոր հարևանի ձեռքերը, վորն սպասում էր խորամանկ ծաղրով:

Գետի վրա գտնվող սանդուխքին կանգնած այդպիսի բերանբացներից մեկի գլխարկն ուղղակի գետը ձգեցին, բուն կերպով քրքջացին, սրախոսեցին:

— Այ թե փոթորիկ բարձրացավ, մարդու շորերն է պատառոտում, — բղավում է մեկը:

— Շուտ լող տուր, ինչ ես նայում, — կոկորդն է ձողում մյուսը:

Իսկ յերբորդը ցույց տալով նավակը, ծիծաղում է.

— Հեյ, թիակները շարժիր, բախտդ փորձիր...

Այդ դեպքից հետո տղաները հանեցին իրենց գլխարկ-

ները. ասիին գտնվողները ձգեցին նրանք գետին, իսկ սան-  
դուխքների վրա և շրին մոտ կանգնածները կոխեցին կրո-  
նատակը, գոտիների հետևը:

Բեռնավորումը շարունակվում էր: Գալիս եյին նոր  
խմբեր աշխուժ, պատրաստ շարքերով, իսկ հետո հարվում,  
կորչում եյին ամբոխի մեջ և այդ նորերը նույնպես սկսում  
եյին վազել, քաշ տալ, հայհոյել, ծիծաղել: Բանվորական  
արտելը գործիքները ձեռքերին և ուսերին, պատրաստ աշ-  
խատանքի՝ կարմիր բանակայինների հետ փոխադարձաբար  
կատակելով ու ծիծաղելով անհետացավ նավի անկուշտ  
յերախում:

Ամեն տեղ բուսնող առևտրական կանայք գետափում  
ծախում եյին հասած, հյուլթեղ ձմերուկ, ճարպիկ, աղա-  
դակող յերեխաները մտնում եյին ամեն տեղ և յերգաձայն  
առաջարկում եյին ծխախոտ: Հեռվում ձողի պես ձգված  
եր անգործ հասարակութունը, նա ապշած նայում էր այդ  
բոլոր պատրաստության վրա, հարցնում էր, նայում, հո-  
տոտում: Հետո նրանցից ամեն մեկը քաղաքում տարածում  
էր անմիա լուրեր, հավատացնելով, վոր բոլորը տեսել է  
«իր սեփական աչքերով»: Ըստ սովորականի, կային այդ-  
տեղ և լրտեսներ, բայց նույնիսկ նրանք էլ չեյին կարող  
թափանցել այդպիսի ըստ յերևութին աղմկալի, բացա-  
հայտ, միևնույն ժամանակ բոլորովին գաղտնի պատրաս-  
տությունների խորքը. ինչ նավեր են, ո՞ւմ են տանում,  
ինչո՞ւ համար, ո՞ւր—վոչ վոք չգիտեր այդ: Ամբողջ գաղտ-  
նիքը մենք չեյինք հայտնում նույնիսկ հրամանատարա-  
կան կազմին, մինչև անգամ պատասխանատու աշխատող-  
ներին:

Մեր գործում գաղտնիքը ծայրահեղ անհրաժեշտ էր:  
Փաղտնիքը պետք էր խիստ պահել, քանի վոր տարածվե-  
լով կրամնողարում, մի քանի ժամից հետո նա կարող էր  
հասնել Ուլապայի շտաբը:

Փաղաքացիական պատերազմի ընթացքում սպիտակ կա-  
զակութունը հիանալիորեն վարժվել էր պաշտպանել իր  
կազակային «ուղունկուլակը»: (Այդպես կոչվում էր Սե-  
միրեչի կիրգիզների սովորութունը — ամեն մի կարևոր



լուր անհապաղ հաղորդել գյուղից - գյուղ: Կիրգիզը հենց վոր լուրն ստացավ, հեծնում է ձին, սլանում է մարգագետիններով, բարձրանում է լեռնային արահետները, և հետևանքն այն է լինում, վոր անհամեմատ կարճ ժամանակում ամբողջ անապատը և վայրի շրջանն իմանում է լուրը): Յեթե Ուլագայը նախորոք իմանար կարմիր դեասանտի մասին — ապա մեր ամբողջ գործողությունը մի գրոշ չարժեր. նրան ուղղակի վոչ մի դժվարություն չեր պատճառի պատրաստվել մեզ դիմավորել և անվնաս դարձնել մեզ. գետային ականներ, մի տասնհինգ գնդացիք յեղեգնուտում և 2—3 հրանոթ իրենց ուժակոծումով — ահա և մեր դեասանտի գերեզմանը. նեղ գետում դժվար կլիներ փրկվել:

Գաղտնիքը պահպանվեց:

Հետաքրքրվող մարդկանց հարցերին պատասխանելու փոխարեն չիմացողները մրթմրթում էին: Իսկ մարտիկները նույնիսկ չէին հետաքրքրվում. յերբեմն միայն վորևեց ցաքիթ և բզուկավոր գնդացիության կոցյուբենկո բոթում էր հարևանին և հարցնում.

— Ոգնություն ենք գնում, այո:

— Հայտնի բան է, խոմ մերոնց դեմ չենք գնում, — ընդհատում էր նրան դժգոհ հարևանը:

Իրանով հենց խոսակցությունը վերջանում էր:

Հավաքված կարմիր բանակայինները հիանալի տղաներ էին. կամավորներ, պրոֆմիությունների անդամներ, բանվորներ, կոմյերիտականներ, մոբիլիզացիայի յենթարկված կուսակցականներ — մի խոսքով այնպիսի տղաներ, վորոնց հետ կարելի չեր սկսել ցանկացած դժվար գործը: Ընդամենը հավաքվեց ութ հարյուր հրացան, 90 սուր, տասը գնդացիք, հրետավորների մի փոքր շուկատ և յերկու դաշտային թեթև հրանոթ: Զոկատը մեծ չեր, բայց, հզոր էր:

Ճաշից հետո ժամի մոտ չորսին ամեն ինչ արդեն պատրաստ էր ուղևորվելու ներս քաշեցինք ուժմբերի վերջին արկղները, ավտոմոբիլները, բերինք հոգնած փրփրակալած ձիերին:

Սպասում էինք, թե արդյոք կհասնեն դեղորայքը, բայց

նման դեպքերում, ինչպես յերևում է, այդ բարիքի վերջը մեկ է լինում — դեղերը չհասան: Յե՛վ կարելի չէ ասել, մեկնեցինք միանգամայն դատարկ պաշարով:

Մանդուխքները քաշեցին բարկամաների, նավերի վրա, ձգեցին կեղտոտ, խոնավ պարանները... Կանայք պարկերն ածեցին չվաճառած ձմերուկները, ձգեցին ուսերին, հեռացան: Ափը դատարկվեց, պարապ դիտողները ցրվեցին... բարկամաների վրա, վորտեղ թափված էին թամբերը, պարկերը, պարանները, խոտը, ձմերուկը, զինվորական պայուսակները — բազմազան դիրքերով գետեղվեցին մարտիկները՝ ծիծաղելով, արմուկով, ուրախ:

Բարկամաներից մեկի վրա, վոտները յեզերքից կախ տալով նստել էր կոմյերիտական Գանկան, արհեստով գրաշար: Նա 18 տարեկան էր: Գանկայի դեմքը գեղեցիկ է, մաքուր, իսկ աչքերը պայծառ ու խելացի: Նա լավ նվագում է գլխարի վրա, թեթևաշարժ է, հրաշալի պարում է և հնչեղ, լայն ու ազատ յերգում: Կոմյերիտմիությունը Գանկային ուզում էր ստուգիա ուղարկել, զարգացնելու իր տաղանդը, բայց անա լողալով յեկավ Ուլագայը — սովորելու ժամանակ չէ, պետք է կովի գնալ: Նա մինչև անգամ չմտածեց — գնա՛լ, թե՛ մնալ: Յերբ կոմյերիտկազմակերպությունը կամավորների գորաժողով հայտարարեց, նա առաջին գրվողներից մեկն յեղավ և վոչ մի վայրկյան չտատանվեց, ընդհակառակը, ամբողջ զգացումներով, մտքերով ու կամքով հանկարծ լարվեց, սպասելով արտասովոր, զարմանալի դեպքերի: Նա ֆրոնտում դեռ յերբեք չէր յեղել և այդ ֆրոնտը պատկերացնում էր բոլորովին յերևակայական կերպով:

Գանկան լուռ էր, թքում էր ջրի վրա և հրճվում էր, յերբ փոքրիկ ձկները մոտ էին ցատկում ու կլանում էին նրա սպիտակ, լուսնման թուփը:

Գանկայի հետևում ծալապատիկ նստած էր նավաստի Լեոնտի Շչոտկինը: Նրա աչքերը բվի աչքերի նման կրո էին, ջրախառն, յերբ անհրաժեշտ էր — բարի էին, իսկ յերբեմն խիստ: Մազերը տակից խուզած էր, լայն, բաց կուրծքն այրվել է, վորպես պղնձե թաս: Շչոտկինը լուռ

նայում էր շուրջը, միանգամից արձակում էր մախորկի ծուխը և բուռնցքով խփում էր ծնկին...

Շենց նրա վոտների մոտ, խոտի դեզի վրա հանգստանում էր հրաշալի հեծվոր, գեղեցիկ, դժգոհնադեմ, բելոուս Տանչուկի սև գանգրահեր գլուխը: Այդ բարկասում Տանչուկի համար ամենաթանկագին արարածը նրա աշխես ձին էր «Յուս» անունով:

Թե ինչու յեր նա ձիուն «Յուս» կոչում, ինքն էլ չէր կարող բացատրել, բայց, հավանական է նրա համար, վոր յերբ Տանչուկը հաճախ «Յուս - յուս - յուս» էր արտասանում — ստացվում էր սուլոց, և դա նրան դուր էր գալիս. նա սկսում էր ծափ տալ, վոտները խփել և պարի յեղանակ շվացնել: «Յուսը», վոր յերկու անգամ վիրավորված էր, հաճախ փրկում էր իր դժգոհնադեմ հեծվորի կյանքը և փախցնում էր նրան նույնիսկ կազակների արագոտն ձիերից:

Տանչուկը պառկած էր բաց աչքերով, կրծում էր ձմերուկի կեղևը, մշում էր և թքում մի կողմ:

Նրա կողքին կանգնած էր մի հեծելազորային, Չոբոտ ազգանունով, բարձր, մկանեղ, հզոր: Կիսաբազց թափառումը քաղաքից քաղաք, լայնարձակ Ռուսաստանի մի ծայրից մյուսը, ընտանեկան խառնաշփոթ կյանքը — այս բոլորը չէին սպանել նրա առույգ վոգին, նրա ինչ վոր պարզ հանդիսավոր վերաբերմունքը դեպի կյանքը: Թվում էր, թե այդ մարդը յերբեք չի ունեցել և չունի վոչ դրժբախտություններ, վոչ վիշտ. կարծես թե նա անընդհատ ուրախության աղբյուր է, վորը բացահայտորեն դուրս է թափվում և յերևում ամեն բանում — նրա խոսքերում, շարժումներում, նրա վարմունքում մարդկանց հետ և այն բանում, թե ինչպես նա հեշտ ու թեթև ձեռնարկում է ամեն մի գործի:

Չոբոտը կանգնած՝ ժպտում էր մի ինչ վոր բանի — հավանական է՝ իր մտքերին — և նայում էր Կուբան գետի հոսանքն ի վեր...

Այդտեղ էր և բզուկավոր, դեղնաբերան Կոցյուբենկոն: Վախտ, փոքրիկ, նա կարծես գետին էր կպել և յերբ իր

խուր, գերեզմանային ձայնով սկսում եր վորևե բան ասել, ավելի յեր փոքրանում: Խեղճը թոքախտով հիվանդ եր: Բժշկվում եր, բայց քիչ, վաս, անկանոն: Սարսափելի հիվանդութունը նրան իր տակն եր առնում, պատրաստվում եր խեղդել: Կոցյուբենկոն այդ բանը գիտեր, և յերբ մեռակ եր լինում, դառնում եր մռայլ, վշտալի, մտախոհ: Իսկ մարդկանց ներկայութեամբ միշտ շտապում եր ամեն բանում և բոլորից բարձր բղավել, սակայն ինչ վոր անմեղ, անչար կերպով—և այդ բանի համար վոչ վոք չեր վիրավորվում: Յերբ նա ձգնում եր «վորոտալ», ինչպես նրա մասին սրախոտում եր աժդահա Չոբոտը, բոլորն ակամա լուռում ելին և դեմքերին հայտնվում եր համբերատար, ներողամիտ ժպիտ:

— Դեհ, Սատանա, յերես մի առ,—բղավեց Տանչուկը, յերբ տեսավ, թե «Յուսը» պատրաստվում ե կծել հարևան ձիուն:

«Յուսը» կանգ առավ, կարծես միտք եր անում լսած խոսքերի վրա, յերկու-յերեք անգամ ցցեց տաք մետաքսյա ականջները և շուռ յեկավ հարևան ձիուց:

— Հապա, այդպես, — հաղթականորեն հայտնեց Տանչուկը:—

— Իսկ ինչ — «այդպես», — հեզնորեն հարցրեց Չոբոտը:

— Չե՞ս տեսնում, խոսք ե հասկանում...

— Ինչպե՞ս չե, տեսնում եմ, կանգնած ե, ինչպես վոր կանգնել եր, — հեզնեց Չոբոտը

— Ուզում եր կրծել, փչացածը...

— Ամեն մեկը մի բան ուզում ե, — փիլիսոփայորեն ասաց Շչոտկինը:

Մի բոպե բոլորը լռեցին:

— Ընկերներ, — դիմեց նրանց Գանկան, — ձիշտ ե, վոր ձին վարժվում ե տիրոջը և հասկանում ե, ինչվոր վերջինս նրան ասում ե, ձիշտ ե, այո:

— Հենց թեկուզ վերցնենք այժմ... — ուզում եր խոսել Տանչուկը:

— Պարզ ե, — վորոտաց Չոբոտը, ընդհատելով նրան, — յերբեմն ասում ես, թե կողքի քաշվիր, իսկ նա իր սմբակը

տեղում ե քո վոտքին... ամեն բան հասկանում ե, այն ել ինչպես:

— Վոչ, ընկերներ, հասկանում ե, — միջամտեց Կոցյուբենկոն, — մէայն թե պետք ե կերակրել: Ի՞նչ կերակրում ես, քեզ ել հասկանում ե և լսում ե միայն քեզ: Իմ հոր և նժույզը միայն նրան եր թույլ տալիս մոտենալ, ինչ հարևան Անտիպի ձեռքերն եր կրծոտում, միսը պոկոտում... Միայն յերբ հայրս եր մոտենում, նրա հետ դառի պես եր դառնում...

— Ով կերակրում ե, նա յել սիրում ե, — պաշտպանեց նրան Գանկան: — Իսկ սերը բոլորը հասկանում են: Հապա գուր տեղը վատաբանիր ձիուն, կարծում ես նա չի վիրավորվի: Ինչպե՞ս չե... Իսկույն կհասկանա... Իսկ յեթե քաշը շոյես, նա հոգի կտա, կսպասի, վոր ելի շոյեն... Այո, յեղբայր, ամեն ինչ հասկանում ե:

— Անպայման այդպես ե, — պաշտպանեց նաև Տանչուկը:

Գետափով գնում եր մի աղջիկ վարդագույն գլխեկապով. նա նայում եր բարկասների վրա և ըստ յերևույթին ինչ վոր մեկին վորոնում եր:

— Հէյ, Գունյա — Գրունյա, — բղավեց Չոբոտը, — չե՞ս տեսնում, ի՞նչ ե:

Աղջիկը ժպտաց և հեռացավ...

— Գոնե գլխակապդ նվիրիր ձանապարհին, — ծիծաղեց նա:

— Նույնիսկ չի ուզում նայել, — ասաց Շչոտկինը:

— Քեզ տեսնում ե, վախենում... — վրա բերեց Չոբոտը:

— Իբր թե ինքդ լամի ես, յարու...

Բոլորը ծիծաղեցին:

— Գանկա, — ասաց Կոցյուբենկոն, — ուզում ես հարմոշկան բերեմ, կերգե՞ս:

— Ինչո՞ւ չե — կերգեմ, — համաձայնեց Գանկան:

Կոցյուբենկոն կորավ պարկերի ու ձիերի միջև և շուտով վերադարձավ բերելով հարմոնը: Նստեց գերանի վրա, ինչպես հարկն ե, մի կամ յերկու բոպե ձայնն եր փոր-

ձոււմ, նոտաները ձգոււմ, մումուում քթի տակը, ընտրոււմ եր  
ամեն տեսակ ակորդներ:

— Դեհ, ի՞նչ, — հարցրեց նա Գանկային:

— Ի՞նչ ես ուզում...

— Յերգիր Ստենկա Ռազինի յերգը — «Կղզու հետևից —  
ձողի վրա»...

— Այիքի վրա\*, — ուղղեց նրան Գանկան: — Միայն թե  
ոգնեք, մենակ չեմ յերգի...

— Սկսիր, — մի անգամից համաձայնեցին Չորտը և  
Տանչուկը:

Գանկան յերգեց: Սկզբում մեղմ, կարծես փորձոււմ եր  
և հարմարվում, հետո ավելի բարձր, բարձր ու բարձր...

Նա արդեն վտաքի յեր կանգնել, յերեսը շուռ եր տվեը  
դեպի գետը և յերգում եր վոչ թե մարդկանց, այլ Կու-  
բանի ալիքների համար:

Հարմոնը վատ եր նվագում. Կոցյուբենկոն համարյա  
բոլորովին նրա վրա չեր կարող նվագել, բայց դա գործը  
չեր փչացնում: Յերբ Գանկան յերգում եր, Կոցյուբենկոն  
դադարում եր նվագել և լսում եր Գանկայի արծաթահըն-  
չյուն ձայնը, իսկ յերբ նա ցանկանում եր իր հարմոնին  
ընթացք տալ — արդեն ուշ եր լինում. տղաները վորոտալի  
ձայներով սկսում էին յերգել քառյակի յերկրորդ կեսը և  
հնարավորութուն չէին տալիս Կոցյուբենկոյին, ցույց  
տալու իրեն, ինչպես հարկն ե... Արդեն ամբողջ բարկասը  
չըջապատել եր յերգողներին և միացել նրանց յերգին...  
Գանկան վերջացնում եր և կրկնում առաջին յերկտուր:

Կղզու հետևից դեպի գետամեջը,

Դեպի գետի արձակ ալիքները...

Փոթորկի պես կրծքերից հնչում էին մյուսների ձայ-  
ները:

Լողալով ընթանում են առաջ նախշուն

Մակույկները՝ քաջ Ստենկա Ռազինի...

\* Բառախաղութուն ե Կերոնիշյալ յերգը ուսերեն օկավում ե «Из-за  
острова на стержень» բառերով: Հարմոնիստ Կոցյուբենկոն տաշարկում ե  
Գանկային յերգել, ասելով — Давай, «за острова на стержень»: Գանկան  
նրա սխալն ուղղում ե, վոչ թե՛ стержень, այլ՝ стержень: Առաջին բառը  
նշանակում ե ձող, իսկ յերկրորդը՝ գետի մեջտեղը, ուժեղ հասանքը: (Թարգմ.):

Այդ բուպեյլն յերգողները թեքվեցին մի կողմ: Նավերն  
աննկատելի, անաղմուկ, առանց շշակի տեղից շարժվեցին,  
ափից արձակվեցին, և իրենց հետևից քաջ տվին բարկաւաները:

Ահագին հրեշները պես, յերկար ժապավենի նման նրանք  
ձգվեցին գետի յերկարութամբ: Այդ տեսարանը հանդի-  
սավոր եր և միաժամանակ ինչվոր գարհուրելի. Չոկատը  
լողում եր դեպի թշնամու թիկունքը:

Դա վոչ վոք չգիտեր, բայց արդեն տենդագին հավա-  
քումների բնույթից բոլորն զգում էին և հասկանում, վոր  
նախատեսվում ե ինչ վոր նշանավոր և շատ կարևոր բան:  
Անհոգ ուրախութունը, վոր տիրում եր բարկաւաների և  
նավերի վրա, բանի վերջիններս կանգնած էին գետափին,  
այդ ուրախութունը գիշեց ինչ վոր զգաստորեն լարված  
և կենտրոնացված դրության: Դա վոչ թե վախ եր, վոչ թե  
շփոթութուն, փոքրոգութուն, այլ ակամա հոգեբանական  
նախապատրաստութուն գալիք լուրջ գործի համար: Կար-  
ձատե ու իմաստալի հայացքներում, արագ և շղային շար-  
ժումներում, հատուկտոր և սեղմ խոսքերում — այդ բո-  
լորի մեջ զգացվում եր ինչ վոր նոր բան, վորը բոլորովին  
գոյութուն չուներ, քանի դեռ կանգնած էինք գետափին.  
այդ դրությունն առաջ շարժման հետ զուգընթաց աճում  
եր և հետզհետե ավելի վորոշակիորեն ընդունում եր տան-  
ջալի սպասելիքի ձև:

Նավերի վրա, վորտեղ ընդհանրապես գործողության  
մասին ավելի շատ գիտեին, քան թե բարկաւաների վրա,  
բոլորը դուրս էին թափվել տախտակամածները և ցույց  
տալով պանագան կողմեր, վորոշում էին թե վորտեղ ե  
ընկած այս կամ այն ձահիճը, վորտեղից են անցնում ձա-  
նապարհները և շավիղները...

Կուբան գետը գալարուն հոսում եր կանաչ ափերով:  
Ահա արդեն անցանք կորնիլովյան գերեզմանը — մի փոքրիկ  
բլուր հենց գետափին: Բոլորը ծանոթ, այնպես հիշատա-  
կելի, պատմական տեղեր են: Այդ ափերն ամբողջովին վո-  
զողված են արյունով. այստեղ հողի ամեն մի թիղը մեր  
կարմիր զնդերը վերցնում էին տաք կովով ցարական գե-  
նեթալների դեմ:

Մեր ջոկատն ավելի ու ավելի հեռու յե լողում...

Հեռվում փռված են գյուղերը վորպես ընդարձակ խավար բծեր: Անտառներ չկան — շուրջը փռված են ընդարձակ, այժմ արդեն ամայի, հնձած դաշտեր:

Տեղ-տեղ կանաչն առանձնապես հյուսիսեղ եւ և թարմ — դրանք ճահիճներն են. յերբեմն հանդիպում են յեղեգնուտներ, բայց դրանք այստեղ դեռ քիչ են — նրանք կհանդիպեն հետո, վաղվա գիշերը. յերբեմն փայլում ե գետախորշի (լիմանի) արճճափայլ տեսքը — նրանց շուրջը, խորթ զավակների պես, բուսել են մանր, ծուռումուռ, անճոռնի թփուտներ...

Հետզհետե ավելի յե իջնում ոգոստոսյան խավար գիշերը: Ահա գետի ափերն ել կորան. նրանց փոխարեն յեզրերին ֆնացին ինչ վոր միապաղաղ մութ շերտեր — վոչ կանաչ, վոչ յեղեգն, վոչ թփեր — վոչինչ չի յերևում: Դանդաղորեն շարժվում ե նավերի կարավանը: Առջևից չորս բոլորը պտտվելով, ինչպես շունն իր բարկացկոտ տիրոջ առաջ, դնում ե մոտորանավակը. նրան առաջադրված ե ամեն բան տեսնել, ամեն ինչ լսել: Իմանալ ամեն բան, ինչվոր սպասվում ե առջևում, իսկ գլխավորապես նայել, թե արդյոք չկան թագցված ականներ:

Այդ առաջին գիշերը դեռ մեծ վտանգներ չեր սպառնում. հարկավոր եր մինչև առավոտ հասնել Սլավյանսկայա ստանիցան, վորը գտնվում ե Կրասնոդարից 70—80 վերստ հեռավորության վրա, յեթե գետով հաշվելու լինենք: Սլավյանսկում մերոնք են, հետևաբար գետի ափերը, մինչև ստանիցան, նույնպես մերը պետք ե լինեն: Սակայն այս վերջին յենթագրությունը սխալ կարող ե լինել. թշնամին հրաշալիորեն ծանոթ լինելով տեղին, բոլոր թագուն ճանապարհներին ե յեղեգնուտների շավիղներին, հաճախ անցնում եր մեր թիկունքը և յերևում եր այնտեղ, վորտեղ նրան բոլորովին չէինք սպասում: Այդպես ել այժմ նա կարող եր անցնել այդ գետափերը, վորոնց մոտով մենք լողում եյինք: Բայց լուռ ե վոչ կրակոց, վոչ աղմուկ: Միայն լսվում ե ջրի ճղփյունը նավերի անիվների տակ, յերբեմն ել մի ձի վրնջում ե, վերավորվելով իր անհանգիստ հարևանից:

Դատարկվեցին նավերի տախտակամածները — ժարդիկ իջան նավասենյակները: Լուռ նստած եյին, խոսելու տրամադրություն չկար: Վոմանք նիրհում եյին, ամեն մի ցնցումին արթնանալով. վոմանք նստած եյին հայացքները սևեռած մութ ապակիներին և մեկը մյուսի հետևից ծխում եյին ծխախոտը: Բարկասների վրա նույնպես լուռ եր. հենվելով թումբերին, պարկերին, սայլերին կամ սեղմվելով իրար — քնած են կարմիր մաքտիկները: Մշում և խումփում են՝ կարծես մրցում են իրար հետ: Փակած աչքերով չափազանց տարրինակ ե լսել այդ յուրահատուկ համերգը: Ինչվոր փնջում և մրափում ե շոգենավերի ներսում, բայց այնպես զուսպ, այնպես կամաց, վոր հազիվ լսելի յե ափում:

Ավելի և ավելի հեռու յե լողում մեր կարմիր կարավանը:

Յերբ թանձր մշուշն սկսեց բարձրանալ գետից, իսկ արևելքում հազիվ ցոլաց արշալույսը — մենք մոտեցանք Սլավյանսկին:

Հենց գյուղի մոտ, գետի վրա ձգված ե ահագին յերկաթուղային կամուրջ: Նրան պայթեցրին սպիտակները, յերբ տեսան, վոր իրենց դրությունն անհուսալի յե: Հրեշն ընկել եր ջրի մեջ, բայց ծայրերի կամարները կանգնած եյին մնացել և անկյունաձև ծռել եյին միջին կամարը, վոր ընկած եր հատակում: Մեր նավերը պետք եր անցկացնել հենց այն ծայրերի կամարների տակով: Հեշտ խնդիր չեր, քանի վոր գետի այդ մասերը սաստիկ ծանծաղել եյին: Աշխատանքը տևեց միչև յերեկո. ամեն մի քայլը չափում եյին, շոշափում, ստուգում: Վերջապես ամեն ինչ պատրաստ ե մեկնելու համար: Տեղավորվեցին նոր մարտիկները, վորոնց վերցրինք Սլավյանսկից: Այժմ արդեն բոլորը միասին հավաքվեցին մոտ 1500 մարդ: Վորոշ մթերքներ բեռնեցինք և նորից ճանապարհ ընկանք: Դեսանտը բաժանեցինք յերեք եշելոնի: Ամեն մի եշելոնի գլխին ճանապարհի ընթացքում նշանակեցինք մի-մի պետ. բացատրեցինք, թե ինչ ճանապարհ ենք անցնելու, ինչ կարելի յե սպասել գիշերը:

Հենց վոր մթնեց, ափից արձակվեցին ծանր շոգենա-  
վերը, այնպես էամաց և անաղմուկ, ինչպես յերեկ: Գյու-  
ղում վոչ վոք չնկատեց մեկնելը — ամբողջ ուրը նա շրջա-  
պատված եր գորքերով — վոչ վոքի չեյին թույլ տալիս վոչ  
գյուղ մտնել, վոչ հեռանալ այնտեղից: Գաղտնիքն այստեղ  
եւ պահվեց: Գաղտնիքը փրկեց կարմիր դեսանտի կյանքը:

\* \* \*

Սլավյանսկից մինչև Նովո-Նիժեաստերիևսկ, վորտեղ  
կանգնած եր Ուլագայի շտաբը, Պրոտոկա գետով 70 վերստ  
ե: Հարկավոր ե գնալ ամբողջ գիշերը: Ժամանակն այնպես  
եր հաշված, վոր ափ դուրս գալու վայրը հասնենք լուսա-  
դեմին, մշուշ ժամանակ, յերբ ամեն ինչ դեռ խոր քնի  
մեջ ե: Թշնամուն պետք եր հանկարծակիի բերել, բոլո-  
րովին անսպասելիորեն հայտնվել:

Սյդ վերջին տանջալի գիշերը յերբեք չեն մոռանա ար-  
շավանքի մասնակիցները: Քանի մինչև Սլավյանսկ եյինք  
գնում — այնտեղ համենայն դեպս մեր վայրերն եյին, և  
թշնամու համար դժվար եր թափանցել այնտեղ: Իսկ այժմ  
Սլավյանսկից այն կողմը, գետախորշերի և ճահճուտների  
միջև, ջրաբույսերում և յեղեգնուտներում, վորոնցով ծածկ-  
ված եյին խոնավ ցածր ափերը — այնտեղ ամենուրեք վրխ-  
տում են թշնամու պահակներն ու հետախույզները: Դրու-  
թյունը ծայրահեղ վտանգավոր ե: Սյդ դրությամբ հարկա-  
վոր եր հատուկ միջոցների դիմել:

Նախ քան նավերի մեկնելը, գետափում հավաքվեցին  
ջոկատի ղեկավարները և խորհրդակցեցին նախազգուշաց-  
ման անհրաժեշտ միջոցների մասին: Սյդտեղ եր և ջոկա-  
տապետ Կովտյուկը, վորի անունն այնպես անխղելիորեն  
կապված ե Տամանյան բանակի հետ: Սյդ բազմաչարչար  
բանակը լեռներով ու ձորերով 1918 — 1919 թվին թշնա-  
մու ողակից նա դուրս բերեց: Կուբանը և հատկապես Տա-  
մանը հիանալիորեն ճանաչում են հրամանատար Յեպիֆան  
Կովտյուկին: Լինելով Պուտավսկայա\* ստանիցայի միջակ-

\* Այժմ կոչվում ե Կրասնոարմեյսկայա ստանիցա:

գյուղացու վորդի, քաղաքացիական պատերազմի ընթաց-  
քում նա կորցրեց իր չնչին կայքը: տնակն այրեցին սալ-  
տակները մինչև տակը, իսկ գուլքն ամբողջովին հափշտա-  
կեցին: Ամբողջ հեղափոխությունը Կովտյուկին անցկացրեց  
գենքի տակ: Նա պակաս ծառայություն չի մատուցել: Յեվ  
հենց այժմ ել, Կուբանը վտանգի տակ ե, հարկավոր ե,  
վոր մեկը նետվի հնոցը, անցնի թշնամու թիկունքը, պետք  
ե կատարել վոչ միայն համարձակ, այլ համարյա խենթ գոր-  
ծողություն: Իսկ ում ընտրել. Յեպիֆան Կովտյուկին: Նա  
մարմնեղ եր և թիկնավետ: Նրա մեծ շեկ բեղերը կարծես  
միայն նրա համար եյին ստեղծված, վորպեսզի նա քաշ-  
քշեր և վոլորեր, յերբ գործի մասին եր մտածում: Իսկ  
խռովահույզ պայմաններում նա միշտ լի յե մտքերով: Սյդ  
բոպեններին այլևս չի խոսում, այլ հրաման ե տալիս: Նրա  
գորշ լուսավոր աչքերն արթուն են, լսողությունը նուրբ  
ե. պինդ, ուժեղ և ճարպիկ ե Կովտյուկը: Նա այն մարդ-  
կանցից ե, վորոնց վիճակված ե մնալ ժողովրդի հիշողու-  
թյան մեջ վորպես կիսաամաչական հերոս: Նրա անվան  
շուրջն արդեն կազմվում են յեղած ու չեղած պատմու-  
թյուններ, կարմիր տամանցիները նրա անունը կապում են  
բոլոր մեծ դեպքերի հետ: Կանգնած ե Կովտյուկը գետա-  
փին և այդ բանն ինքն ել չնկատելով, շարունակ ձգում ե  
լայն շեկ բեղերը:

Նրա կողքին կանգնած ե իր մերձակա, լավագույն ոգ-  
նական Կովալյովը: Նրա դեմքը կոնստուկտից ծովել ե,  
այտոսկրը շուռ ե յեկել կողքի, վերին շրթունքը կտրվել ե:  
Կովալյովը չի հիշում, թե ինքը քանի անգամ ե յեղել կռիվ-  
ներում, քանի անգամ գրոհի յե գնացել: Նույնիսկ ճիշտ չի  
կարող հաշվել, թե քանի անգամ նա վիրավորվել ե՝ 12  
թե 15 անգամ: Յես չգիտեմ, նրա վրա կս մի վողջ տեղ,  
վորտեղ գնդակը չի դիպել, չի հարվածել ումբի բեկորը  
կամ վեր թռչող հողը: Յեվ հասկանալի չի, թե մարդն ինչ-  
պես ե դիմացել: Նիհար, անառողջ, դժգույն տանջալի դեմ-  
քով, վորի վրա բուսած ե փափուկ մետաքսե մորուքը, նա  
հանդիսանում ե իսկական ուղիղ ռեինակ իր մշտական  
պատրաստակամությամբ դեպի ամեն մի, թեկուզ ամենա-

602



վտանգավոր գործը, իր կարգապահութիւնով, անձնական արիութեամբ և ազնւութեամբ: Համարվելով լրիվ արձակուրդում, նա յերբեք չի կարող ուղղակի գրութիւններից դուրս մնալ և այժմ մեզ հետ միասին միանգամայն կամավոր կերպով ուղևորվում է դեպի վտանգավոր գործը:

Յես հետո նրան տեսա կովում—նույնպես ուրախ եր, հանգիստ, ինչպես միշտ: Ամենամեծ գործը նա կատարում եր անփոփոխ սառնարյունութեամբ և այդ գործի մասին զեկուցում եր, վորպես ուշադրութեան վոչ արժանի, դատարկ բան: Այդպիսի Կովայուփներ, հազիվ նկատելի, բայց իսկական հերոսներ շատ կան Կարմիր բանակում: Բայց նրանք միշտ համեստ են, իրենց մասին լուում են, պետերի աչքը չեն մտնում—և մնում են ստվերում:

Կովայուփի դիմացն է կանգնած հրետանու հրամանատար Կուլբերգը: Յես նրան ավելի մոտ ճանաչեցի միայն հետո, տաք կովում, յերբ մեզ մոտ ամեն ինչ մազից եր կախված. այդպիսի տոկոնութեան, այդպիսի հաստատակամութեան միայն նախանձել կարելի յե. կայծաքար է—վոչ թե մարդ: Իսկ վոր նայես, կարծես շինել հազած այծ է, և ձայնն ել այծի ձայնի նման է. դողում է, սիսեռի պես շաղ գալիս:

Կային նույնպես ուրիշ յերկու-յերեք հրամանատարներ: Յերկար չխորհրդակցեցինք. ամեն ինչ համարյա վճուված և վերամտածված եր դեռ ցերեկը:

— Կանչեցեք Կոնդրային, — հրամայեց Կովայուփը:

— Կոնդրա, Կոնդրա, Կոնդրա... — բերնեբերան անցավ:

Կոնդրան մոտենում է արագ հաստատ քայլերով:

— Ներկայացա, ինչ եք հրամայում:

Հաճելի յե նայել կորովի յերիտասարդի վրա. աչքերը վառվում են խիզախութեամբ, իսկ ձեռքը հենց իջնում է չեչենյան կեռ թրի կոթին: Բրդե սպիտակ գլխարկը դրված է հենց ծոծրակին. բացված է մաքուր, բարձր ճակատը, պայծառ արագաշարժ աչքերն ավելի յեն պարզվել:

— Հսիր, Կոնդրա, — ասաց Կովայուփը, — դու պետք է իմանաս, վոր այն գործը, վորը մենք ձեռնարկում ենք—վտանգավոր գործ է: Ճահճուտներում սպիտակներն են.

Ուր վոր նայես — յեղեզնուտներում, մարդերում, գետախորշերում — ամենուրեք կանգնած են, շրջադայում են հսկիչները... գիտես դու այդ տեղերը:

— Ել ո՞վ գիտե դրանք, յեթե վոչ յես, — ժպտաց Կոնդրան: — Մինչև Աչուկ, մինչև ծով — բոլորը ճահիճները, բոլոր ճանապարհները ծանոթ են... գնացել եմ, գիտեմ...

— Իսկ յեթե գիտես, հա թե ինչ, — ասաց Կովայուփը, — մենք չպետք է հապաղենք... նավերը պատրաստ են մեկնելու: Դու պետք է վերցնես յերեք-չորս տասնյակ լավագույն տղաներ, ամենահամարձակներին, նաև վայրերն իմացողներին, նրանց հետ միասին — Ֆըշ... (Կովայուփը շվացրեց և մատով ցույց տվեց անորոշ կերպով դեպի առաջ)...

— Հասկանում եմ...

— Իսկ յեթե հասկանում ես, ել չենք բացատրի: Կվերցնես ոֆիցերական ուսադիրներ, կոկարդներ, փայլուն կոճակներ. յես ամեն ինչ պատրաստել եմ... հապա, — դարձավ նա կանգնածներից մեկին:

Նա մի ակնթարթում ուղղվեց դեպի շոգենավը և շտապ վերադարձավ փոքրիկ կապոցը ձեռքին:

— Առ, — Կովայուփը կապոցը տվեց Կոնդրային: — Միայն աշխուժ. զարդարվելու յեք վոչ թե այստեղ, այլ յերբ մեկնեք: Ընտրիր հուսալի մեկին — նա կգնա ձախ ափով, նրան կտաս մի տասնյակ մարդիկ. այնտեղ այնքան վտանգավոր չե: Իսկ ինքդ աջ կգնաս: Շուրջդ նայիր, աչքաթող մի անիր: Իսկ յեթե վորեք վատ բան լինի, դու գիտես մեր ազդանշանները: Ուղղակի գետափի մոտով գնա...

— Հասկանում եմ...

— Հիշիր, յեթե ափերը չմաքրես, մենք հետ չենք վերադառնա...

— Այո, այդպես է... կարելի՞ յե գնալ...

— Գնա... բայց աշխուժ...

Կոնդրան ինչպես հայտնվել եր, այնպես ել արագ անհայտացավ բարկասի վրա: Շուտով սկսեցին իջեցնել ձիերը: Հետո կուտակվեցին, մի բոպե խորհրդակցեցին, բա-

ժանվեցին յերկու մասի... Յեվ յերևում եր, թե Կոնդրան ինչպես սրարշավ հեռացավ, իսկ նրա հետևից — 25 մարտիկներ:

Մյուս կողմը շոկվեց 15 մարդկանցից բաղկացած մի խումբ, և յես ճանաչեցի Չորոտին, վոր անցած եր այդ խմբի գլուխը. նա նստած եր բարձր սև ձիու վրա: Իսկ նրա կողքին գտնվում եր Գանական — նիհար, ճկուն, ինչպես բարդու ճյուղ. Կարմիր բանակայինները լուս նայում էին հեռացող ընկերների հետևից. չեյին հարցնում, չեյին փորձում իմանալ — ամեն բան ինքնրստինքյան հասկանալի յեր: Վոչ կատակ էյին անում, վոչ ել ծիծաղում:

Կոնդրան հեռացավ մեկ և կես վերստ, իր տղաների հետ ձիերից իջան և ասաց նրանց.

— Ահա այստեղ շոկվեցեք, ում ինչ հասնում ե, միայն թե աստիճանների մասին չվիճեք, — և կապոցը տվեց նրանց:

Տղաները քանդեցին այն, միջից հանեցին սպիտակ զվարդիական զարդարանքները — ուսաղիբներ, կոկարդներ, կոճակներ, ժապավեններ, — և հինգ ըուպե հետո շոկատը ճանաչել չեր կարելի:

Ինքը Կոնդրան դարձավ գնդապետ և յերբ շրթունքները փքում եր, դառնում եր ծիծաղաշարժ և անճոռնի, կարծես թե սիրամարդի փետուրներ հագած ագռավ լիներ,

Խավարը դեռ չեր կլանել յերեկոյան աղշամուղջը: Բայց ճանապարհը դժվարությամբ կարելի յեր տարբերել: Նորից նստեցին ձիերը, շարժվեցին:

— Տղաներ, — ներշնչում եր Կոնդրան, — չծխեք, բարձր չհագաք — իբր թե մենք բոլորովին չկանք...

Գնում էյին լուսթյան մեջ, հազիվ լսելի կերպով ճողփում էյին ընտելացած ձիերը խոնավ և կաշուն գետնի վրա: Հենց վոր նրանք սկսում էյին խրվել — հեծվորները գնում էյին աջ և ձախ, վորոնում էյին ավելի պինդ գետնին, իսկական ճանապարհը... Այդպես գնացին մեկ յերկու, յերեք ժամ... վոչ վոք չհանդիպեց. յեղեգնուսներում և ճահճուսներում կյանքի վոչ մի նշան չկար: Սև թանձր խավարը պատել եր հարթությունները. ճահիճների վրա պառկած եր ճանր գորշ մառախուղը: Ահա դիմացից լսվում



են ինչ վոր տարրորինակ ձայներ, վորոնք մինչև այժմ  
չկային. այդպես յերբեմն հնչում ե հեռախոսային լարը,  
կամ գուցե հեռվում առվակն ե թափվում...

Կոնդրան կանգ առավ, նրա հետ միասին և մյուսները:  
Նա ականջը դարձրեց այն կողմը, վորտեղից լսվում էին  
ձայները, և այժմ պարզ կերպով տարբերեց մարդկային  
խոսակցության աղմուկը...

— Պատրաստվել, — կամացուկ տրվեց հրամանը:

Ձեռքերը մեկնեցին թրերին: Շարունակեցին դանդա-  
ղորեն առաջ շարժվել... Արդեն պարզորեն նկատելի էին  
վեց ձիավորների դիմակները — նրանք գալիս էին ուղ-  
ղակի Կոնդրայի վրա:

— Ո՞վ ե գալիս, — լսվեց այնտեղից:

— Կանգնել, — հրաման տվեց Կոնդրան, — վոր գորամա-  
սից եք:

— Ալեքսեյեվցիներ ենք... իսկ դ՞ուք վոր գորամասից եք:

— Կազանովի կոմենդանտային խմբից ենք...

Հեծվորները մոտեցան: Տեսան Կոնդրայի ուսադիր-  
ները և հարգանքով ձեռքերը մատեցրին գլխարկներին:

— Հետախույզներ եք — հարցրեց Կոնդրան:

— Այո, հետախույզներ ենք... միայն թե ովքեր են  
գլխերն այս կողմերն անցնելու:

— Վոչ վոք չկա, մենք ինքներս անցանք ամբողջ 15  
վերստ:

Այդ ժամանակ մեր ձիավորներն ողակաձև շրջապատե-  
ցին թշնամու հետախույզներին...

Նորից մի քանի հարց ու պատասխան. իմացան, վոր  
հեռակից գալիս ե նոր պահակադետ: Լուեցին: Լուսթյունը  
տեվեց մի վայրկյան... Կոնդրան գոռաց և հանկարծ փայ-  
լեցին թրերը... հինգ ըսպե հետո ամեն ինչ վերջացած եր:

Գնացին առաջ և նոր պահակադետի վերջն ել նույնը  
յեղավ...

Այդպես քաջարի Կոնդրան գլխերվա ընթացքում կոտո-  
րեց թշնամու վեց պահակախմբեր և վոչ մի մարդու բաց  
չթողեց:

Չորոտին նույնպես պատահեցին յերկու պահակախմ-

բեր—նրանց վիճակը նույնն էր, միայն թե յերկրորդ պահակախմբի հետ քիչ մնաց, վոր դժբախտութիւն պատահեր. վիրավորված սպիտակ ձիավորի ձին նետվեց և քիչ մնաց նրան փախցնելու: Անհրաժեշտ յեղավ նրա հետևից գնդակ հասցնել, վորը փախստականին գետին գլորեց:

Չորրորդ կրակոցը մենք լսեցինք նավից և լարվեցինք, յենթադրեցինք, վոր տեղի կունենա կրակոց, վոր պահակախմբին հաջողվեց փախչել, և թշնամին աշխուժորեն ձեռք կառնի ինչ վոր նոր միջոցներ...

Մենք բոլորս կանգնած ենք վերին տախտակամածին և սպասում ենք... Ահա կլսվեն Կոնդրայի կամ Չորրորդ ազդանշանները: Բայց չե, վոչինչ չի լսվում, գետափերում գերեզմանային հանգստութիւնն է:

Ամբողջ գիշերը մինչև առավոտ մենք հերթապահութիւնն էյինք անում վերին տախտակամածներում: Շարունակ թվում էր, թե յեղեգնուտներում վորևէ մեկը շարժվում է, թե շաշում է գենքը, լսելի յե նույնիսկ խուլ և զուսպ շշուկ-խոսակցութիւն: Այստեղ ափերը մոտիկ են— և կարելի յե դիտել գետափի յեղեգնուտի պղտոր որորվող դաշտը:

— Կարծես թե ինչ վոր բան... — սկսեց մեկը, նայելով խավարի միջից պեպի ափը և ցույց տալով հարեվանին:

— Չե, — պատասխանեց նա, — դատարկ բան է...

Բայց հետո, նայելով ուշադրութեամբ, շարունակեց.

— Թեև... Այո, այո... կարծես թե իրոք...

— Դու դրանց մասին ես ասում, վորոնք ձոճվում են սվինների պես:

— Այո, նրանց մասին... նայիր... միայն թե՛ ինչ բան է այստեղ, թե հեռվում դարձյալ նույն սվիններն են...

— Եհ, չե՞ վոր դրանք յեղեգնուտներն են ալեկոծվում...

Յե՛վ հայացքները հեռացրին ափից, բայց միայն մի վայրկյան, իսկ հետո — դարձյալ ու դարձյալ սվիններ, խուլ և լուռ խոսակցութիւն, պողպատի շառաչում... Գիշերը լի յե սարսափելի շշուկներով ու ձայներով... յուրաքանչյուրն ուժ է գործադրում մնալ հանգիստ, բայց հանգստութիւնն չկա: Կարելի յե պահել հանգիստ դեմք և ձայն

ու շարժումներ, բայց միտքն աշխատում է տենդագին, զգացողականութիւնը ծայրահեղորեն լարված է: Դատում էյին այն մասին, թե ինչ պետք է անել, յեթե հանկարծ յեղեգները միջից թշնամին բաց անի գնդացիրային կրակ: Իսկ չե՞ վոր կարելի յե և ավելին սպասել. այն ժամանակ նա կկարողանար մոտ բերել հրանոթները և մեզ կոմբակոծեր... Ի՞նչ անել այն ժամանակ:

Չանազան բաներ ենք յենթադրում: Միայն թե ամեն մեկին պարզ էր, վոր այն ժամանակ փրկութեան հույսը քիչ է. նեղ գետում անձոռնի նավերը չեն կարող շուռ գալ, իսկ առաջ գնալ—նշանակում է ել ավելի գլուխը խոթել մահվան ողակը: Բայց ինչ անել:

Համաձայնեցինք, վոր անհրաժեշտ է նավերը կանգնեցնել ափին, սանդուխքներն իջեցնել և կովի բռնվել...

Նշտ է ասել «կովի բռնվել»: Մինչև ափ հասնելը թշնամին բոլորիս կարող էր հնձել գնդացիրային կրակով. յեղեգների միջից նա հիանալի կերպով կտեսնի, թե ինչպես բարկասները վրա խիտ կուտակվել են մեր մարտիկները:

Նրանք նույնպես քնած չէին. այժմ, յերբ Սլավյանսկից հեռացանք, արդեն ճանապարհին հրամանատարները բացատրեցին նրանց առաջիկա գործողութիւնը իր բոլոր դժվարութիւններով և վտանգներով, վորոնք կարելի յեր միայն նախատեսել: Ել ինչպէս կարելի յեր քնել—այդպիսի գիշերները քնելու ժամանակ չե. աչքերն իրենք են լայնանում և հայացքները մեխվում են լուռ խավարի մեջ:

Սեղմվելով միմյանց, նրանք բոլոր ծայրերում խոսում էյին կամացուկ և ընդհատումներով:

— Յուրա է...

— Փչիր բուռնցքիդ—շոգ կլինի:

— Ինքդ փչիր... Ահա նա այնպես կփչի, վոր ուղղակի կտաքանաս, — և կարմիր բանակայինը գլխով նշան արեց դեպի ափը, թշնամու կողմը:

— Նա մոտիկ է այստեղից:

— Ով գիտե... ասում են ամենուրեք շրջում է գետափում... Ահա հենց այստեղ յեղեգնուտում պառկած է... Մերոնք գնացին վորոնցիտ...

- Կոնդրատն մեկնեց:
- Նա: Ել ու՛ր: Այստեղ բոլոր անցքերը նա գիտե...
- Յերիտասարդը գլուխ ունի...
- Այն ել վոնց... Մենք նրա հետ դեռ գերմանական ֆրոնտում\* ենք յեղել—դեռ այն ժամանակ յերեք Գեորգի վաստակեց:
- Կարելի յե վոչ վոք չկա—ինչ վոր լուռ ե...
- Կարծում ես, թե քեզ բղավելու յեն. ափից կկրակեն և վերջացավ:
- Վոչ, ասում եմ՝ Կոնդրայից վոչ մի լուր չկա:
- Ինչպէս դու կարող ես լսել, սավառնակ ե թռչելու, ի՞նչ ե:
- Ի՞նչ բան ե, յեղբայրներ, վոչ մի տեղ սավառնակներ չկան:
- Ինչպէս չկան, թռչում են... նրանք քաղաքի այն կողմն են գտնվում և թռչում են, յերբ արևը հազիվ ծագում ե — դրա համար ել չես տեսնում:
- Ահա թե ինչ... իսկ ինչո՞ւ յեն նրանք թռչում:
- Ծխախոտը մոտդ ե:
- Ծխել չի կարելի — չե՞ վոր քեզ վաշտապետն ասաց:
- Ճիշտ վոր... իսկ յեթե բռնումս պահեմ, յես կարծում եմ, կանցնի, նկատելի չե...
- Իսկույն բողոքեցին յերեք — չորս ձայներ: Թույլ չտվին ծխել:
- Շո՞ւտ կհասնենք:
- Ո՞ւր:
- Վորտեղ վոր ափ ենք դուրս գալու:
- Հենց վոր կանգնենք—նշանակում ե և հասանք:
- Բոլոր բարկասների վրա տեղի եյին ունենում այդպիսի համառոտ, գուսպ խոսակցութիւններ:
- Մի հարցից ծագում եր մյուսը — հաճախ միանգամայն պատահականորեն, առանձին խոսքերից...

\* Խոսքը 1914-1918 թվի իմպերիալիստական պատերազմի մասին ե, յերբ ցարական Ռուսաստանը կռվում եր Գերմանիայի դեմ: Պատերազմի ժամանակ ցարական կառավարութիւնն առանձին աչքի ընկնող զինվորներին պարգևատրում եր սուրբ Գեորգի շքանշանով: (Թարգմ):

Դարձյալ այնպես լուռ, համարյա անաղմուկ լողում եյին խավարում նավերի կարավանները: Արշալույսին յերբ գետի ծանր մառախուղը դեռ կանգնած եր խիտ ամպի պես, առաջին նավը կանգ առավ ափին... մեկը մյուսի հետևից յեկան նավերը և խրվեցին յեղեգներէ և բարձր կանաչի մեջ:

Մինչև գլուղը մնացել եր ընդամենը յերկու վերստ: Գետափին բուսականութիւն չկար և ձգվում եր լայն բացատը, վորտեղ հարմար եր բեռնաթափվել և զորքերը դասավորել: Այդ տեղերին ծանոթ մարդիկ ասում եյին, վոր բեռնաթափման համար ավելի հարմար տեղ չի կարելի գտնել, վոր այդ բացատը միակն ե Սլավյանսկից մինչև այդտեղ ընկած տարածութիւն վրա:

Աշխույժ կերպով ձգեցինք սանդուխքները և զարմանալի արագութեամբ բոլորս յերևացինք գետափին: Հենց վոր վոտ դրինք հաստատ հողի վրա — ազատ և ուրախ շնչեցինք. այժմ ջրի վրա չենք, այժմ հրացանածիգները և ձիավորները կկարողանան պաշտպանել իրենց և զուր տեղը կյանքերը չեն գոհի: Իջեցրին հրանոթներն ու ձիերին: Հրամանատարները դասավորեցին զորամասերը: Հետախույզներն արշավեցին բոլոր ծայրերը: Զղայնութիւնն անհետացավ և զիջեց սառն, լուրջ մտակենտրոնացման: Ամեն ինչ կատարվում եր արագ, այնպես արագ, վոր միայն կարելի յեր հիանալ: Մարտիկները հասկանում եյին, թե դա ինչպէս անհրաժեշտ եր այդպիսի դրութիւն ժամանակ:

Հրամանատարները ձիերը նստած շրջապատեցին մեզ կովտյուխի հետ միասին: Յերկու յերեք գուզնութաց խորհուրդներ — և մարշ տեղերը: Արդեն ամեն ինչ պատրաստ ե: Հրաման ե տրված դիմել հարձակման: Առկից սրբաշավ գնացին հեծելազորայինները, շարժվեցին շղթա կազմած զորքերը:

\* \* \*

Գանկային բաժին ընկավ գլուղի փոփոցներով աստղի պես սլանալ, ամեն ինչ նայել և զեկուցել: Նա թռչունի պես նետվում եր խիտ ուղիներէ, փակ փեղկերով տներէ

մոտով, անցավ յեկեղեցու մոտ յեղած գլխավոր հրապարակով և շրջելով ամբողջ գյուղը, վերադարձավ ու գեկուցեց, վոր «ամեն ինչ կարգին ե»։ Յերբ սկսեցին պարզաբանել այդ զարմանալի «ամեն ինչ կարգին ե» արտահայտութիւնը, ապա յերևաց, վոր դատապարտված գյուղը քնած ե ինչպես մեռած։ Նա վոչինչ չի սպասում, վոչինչ չգիտե։ Հատ ու կենտ անկյուններում նիրհում են պահակները, նրանք քնաբեր աչքերով նայում եյին արշավող Գանկայի հետևեց և համարում եյին նրան հավանորեն լրաբեր դիրքերից... Բնակիչները նույնպես քնած եյին — միայն յերբեմն պատահում եր վորևե մի կորաքամակ պառավ կազակուհի, վորը վեդրոն ձեռքին ջրհորն եր գնում։ Գանկան տեսավ և սավառնակը — նա գտնվում եր յեկեղեցու մոտի հրապարակում։ Մի մեծ տան ցանկապատի հետևում նա տեսավ մոտոցիկլետ և յերկու ավտոմեքենա։

Յերբ նա հեվալով և շտապելով այդ բոլորը պատմեց, միանգամայն պարզ եր, վոր մեր շարժումը թշնամին չի նկատել։

Նկատի յեր առնված հարվածել հանկարծակիորեն։ Պետք եր մոտենալ միանգամայն անսպասելիորեն, գրոհել շմեցուցիչ կերպով։ Միևնույն ժամանակ անհրաժեշտ եր ստեղծել այն տպավորութիւնը, թե հարձակվում ենք խոշոր զորամասերով, զինված, հարուստ հրետանիով։ Մյուս կողմից, պետք եր կազմակերպել պահակներ, անսպասելի հանդիպումներ, լրիվ շրջապատման տպավորութիւն և թշնամուն ներշնչել այն համոզումը, վոր նրա դրութիւնն անհուսալի յե։ Անսպասելի հարվածի տպավորութիւնն այստեղ բացառիկ դեր պետք ե խաղար։

Բացատի վերջում, հին գյուղի տակ, դեռ մնացել եյին չայրած յեղեգների ամբողջ շերտեր։ Անհնար եր այդտեղից անցնել և ստիպված յեղանք թեքվել և շուրջ անցնել։ Բեռնաթափումը, հավաքումները, պատրաստութիւնները, մինչև վ գյուղ շարժվելը — մոտ յերկու ժամ տևեցին։ Գյուղը դեռ չեր արթնանում։ Մշուշը ցրվում եր, բայց դանդաղորեն, և գետի վրա շարունակում եր մնալ այնպես թանձր, սպիտակավուն ամպի պես, ինչպես առաջ։ Պրոտոկա գետը

հենց գյուղի մոտ թեքվում եր արևմտյան ուղղութիւնը և դուրս եր գալիս Աչուև, դեպի ծով։ Գետափով մինչև գյուղ և գյուղի այն կողմը ձգվում եր ճանապարհը։ Այդ ճանապարհով ել ուղղվեց մեր զորքերի մի մասը։ Այնտեղ ավելի հեռուն ուղարկվեց հեծելազորի շոկատը Չոբոտի գլխավորութիւնը, պահակութիւն համար, վորին հանձնարարվեց կտրատել թշնամուն, յեթե նա խուճապի դեպքում սկսի փախչել, ազատվել Աչուևում։

Գետափի զորամասերն իրենց շարժման ընթացքում այնպես դասավորվեցին, վոր կարողանան գյուղ հասնել միաժամանակ տարբեր կողմերից և կրակել միաժամանակ։

Հենց այդ ժամանակ պետք ե վորոտար հրետանին։

Թշնամու ուժերը, վորոնք տեղավորված եյին գյուղում, կարող եյին մեզ ուժեղ դիմադրութիւն ցույց տալ, նկատի առնելով նրանց բավական բարձր մարտական վորակը (քիչ հուսալի եյին միայն գերի կարմիրբանակայիները)։ Այնտեղ կանգ եյին առել գեներալ Կազանովիչի կորպուսի զորամասերը. այնքսեյեյվյան հետևակ գունդը, նույն գնդի պահեստի գումարտակը, այնքսեյեյվյան ու կոնստանտինովյան ռազմական դպրոցները և Կուբանյան հրաձգային գունդը։ Բացի այդ, գյուղում տեղավորված եր ուլազայեյվյան դեսանտի գլխավոր շտաբն իր բոլոր ճյուղավորումներով և ուրիշ ավելի մանր շտաբներ ու թիկունքային հաստատութիւններ։ Այդ բոլորի հետ միասին պետք եր թշնամական գործողութիւններ սպասել գյուղի բնակչութիւն կողմից։ Նովո-Նիժեստեբլիևսկ գյուղի մասին մենք վատ համարում ունեյինք։

Առավոտյան մոտ ժամի յոթին, յերբ զորամասերն ընդհուպ մոտեցան գյուղին, լսվեց հրանոթային առաջին կրակոցը։ Այնուհետև սկսվեց խլացուցիչ ուժեղութիւն հրանոթային վորոտները ձուլվում եյին գնդացիրային ու հրացանային կրակոցներին։ Մեր զորամասերն առաջ եյին շարժվում։ Թշնամին չհասկանալով բանի եյութիւնը, բոլորովին կորցրեց իրեն և յերբեք չեր կարող պաշտպանութիւն կազմակերպել։ Մեր դեսանտի վրա բացած անկանոն կրակը համարյա վոչ մի վնաս չեր պատճառում։

Կարմիր հետևակը հուպ եր տալիս և մեկը մյուսի հետեից գրավում եր գյուղի փողոցները: Կենտրոնում առիթ յեղավ ընդհարվել պաշտպանության պատրաստ թշնամու հետ:

Մեր գումարտակներն այդ տեղում առաջնորդում եր Կովալյովը: Նա հիանալիորեն հասկանում եր, թե այժմ ինչպես վտանգավոր է հապաղելը: Նա գիտեր, վոր թշնամու շարքերում խուճապը կարող է վերանալ, և այն փամանակ հեշտ չի լինի թշնամու հետ գլուխ հանել: Այդպիսի բուպենքին բավական է մի հնարագետ հրամանատար, վորը տիրաբար կանգնեցնի փախչողներին, վորը մի ակնթարթում հասկանա գործի ելուժյունը և իր համար լավ պարզի, թե ինչպես և ինչից սկսել հենց այս բուպեյին: Պուճապը սովորաբար ուժեղանում է բազմաթիվ պատահական ու հակասական հրամաններից, վորոնք տրվում են անմտածված և շտապ. մի հրամանը հերքում է մյուսին, խառնում, խճողում է գործը: Թշնամին հենց այժմ գտնվում եր այդպիսի անպլանային պրպտումների մեջ: Բայց արդեն նրա կազմակերպման առաջին նշանները յերևում էին: Պետք եր մոմենտը վորսալ:

Կովալյովը հրաման է տալիս առաջ շարժվել: Ինքը հրացանը ձեռքին մնում է ձախ թևում: Այլ թևից գնում է Շչոտկինը: Նրա աչքերը բացված են այնպես լախ, ինչպես այնտեղ, բարկասի վրա յերգելիս: Միայն թե այժմ այդ աչքերում վառվում են խիստ, անողոք գիշատիչի կրակները: Ամբողջ ձակատը մինչև քթահիմքը խոր կրնձիոն է կտրել: Շչոտկինը ծանրաքայլ է, նա կարծես թե չի գնում, այլ ուրիշի պատվերով հարթում է գետինը: Նրա հետ գնալը հանգիստ է—ինչվոր հաստատ համոզմունք է առաջանում, թե նրա հետ չես կորչի, թե Շչոտկինին անհնար է տապալել: Նա հրամանը տալիս է կարճ, վորոշակի, բարկացկոտ...

Թշնամին խռնվեց այգիների մոտ: Յերևում եր, վոր նա չի դասավորվել, ինչպես հարկն է, վոր դեռ չի գտնվել հզոր, կազմակերպող ձեռք, վորը կարողանար ամբոխին դարձնել կարգավորված, ճկուն շղթաներ:

Շուտ, շուտ... փողոցներով ու անկյուններով դեպի



այդ ամբոխն էյին վազում զինվորները մարագներէց, տը-  
ներէց, այգիներէց ու բանջարանոցներէց: Մեր աչքի առաջ  
ամբոխն աճում է: Նա արդեն ծավալվում է, ձևավորվում:  
Ելի մի ըոպէ, և մենք կհանդիպենք պողպատե սվինների  
պատնեշին, շեշտակի, ավերիչ կրակի ծովին...

— Ուռն — լսվում է մեր շարքերում...

Հրացանները բռնած մարտիկները սլանում են ամբոխի  
վրա... Մյստեղ շփոթութուն է տիրում: Շատերն սկսեցին  
փախչել ամեն կողմ: Մի քանիսը դեռ շարունակում էյին  
կրակել... համարյա բոլորը հրացանները ձգում էյին և  
կանգնում, սպասում էյին վեր բարձրացրած ձեռներով:  
Շուրջը սուլում էյին գնդակները, այս ու այն կողմը գո-  
հեր խելով: Առաջիններից մեկը, ուղղակի ճակատից,  
սպանվեց Լեոնտի Շչոտկինը:

Հանկարծ ցանկապատից բաժանվեցին 50 մարդ և նետ-  
վեցին մեզ վրա... Այդ բանն ստիպեց հետ քաշել մեր  
առաջավոր շրթան: Մի ըոպէ շփոթութուն առաջացավ,  
բայց Կովալյովն արդեն տվեց նոր բարձր հրաման:

— Առաջ տղաներ, առաջ, ուռն...

Յե՛վ կարմիր բանակայինները կատաղածի պես նետ-  
վեցին առաջ... հետ շարտեցին իրենց վրա հարձակվող  
սպիտակ զինվորներին, արորեցին նրանց իրենց տակ: այ-  
նուհետև վոչինչ չե՛ր յերևում...

Յերբ այդ հիսնյակը հարձակվեց ցանկապատից,  
նրանք, ովքեր հրացանները վայր էյին ձգել, մնացին ան-  
շարժ և նրանց հետևից շվազեցին. նրանք կանգնել էյին  
և սպասում էյին խնայողության՝ բարձր ցցած ձեռքերով:  
Կարմիր մարտիկները շրջապատեցին գերիներին, արագ հե-  
ռացրին ուրիշ տեղ, կանգնեցին, ձեռք չէյին տալիս...  
Ձգված զենքերը հավաքեցին, խուզարկեցին, իսկ մի քանի  
ըոպէյից հետո բերին սայլերը, բարձեցին և տարան դեպի  
գետափ: Ամենուրեք, ուր նայում էյիր, թափված էյին վի-  
րավորները, հեծում էյին, լըխում, ուրիշները բզավում  
էյին ցավից... Պարզվեց, Վոր այդ 50—60 սպիտակ զինվոր-  
ների մի մասն ոֆիցերներ էյին, մյուս մասն ել ալեքսե-  
յե՛վցիներ: Նրանցից վոչ մեկին չխնայեցինք:

Մնացած գերիներին քշեցինք անմիջապես դեպի բար-  
Պրիսոնները:

Չորսուրը, վորն իր ջոկատով անցել էր գյուղի այն  
կողմը, գնաց մինչև յեղեգնուտը, իջեցրեց հեծվորներին և  
սպասում էր: Նրանից տասը հետախույզներ ձգվեցին շրդ-  
թայի պես մինչև գյուղը և մեկը մյուսին հաղորդում էր,  
թե ինչպես են ընթանում գործերն այնտեղ, ինչ է տեսն-  
վում, ինչ լսվում:

Քանի փախչում էին առանձին սպիտակ զինվորներ,  
Չորսուրը վտարի չէր հանում իր տղաներին և զուր չէր  
կրակում, չէր հայտնում իր տեղը: Ճշմարիտ է, առանձին  
փախստականներ իրենք էին ուղղվում այստեղ, դեպի  
յեղեգնուտը. նրանց անաղմուկ բռնում էին, թողնում  
իրենց հետ... բայց հենց վոր կովայովի գրոհը վճռեց գործը,  
սպիտակների կայազորի մնացորդները հեռացան գյուղից  
և ուղղակի դուրս յեկան ճանապարհ, դեպի գետը, հուսա-  
լով նավակներով անցնել և թագնվել մյուս ափում, այդ  
րոպեին ջոկատը հեծավ ձիերը և յեղեգնուտից նետվեց  
փախչողների վրա... Տեղի ունեցավ ինչ վոր անհավատալի  
բան: Սպիտակները բոլորովին չէին սպասում հարձակում  
այդ կողմից: Նրանք նետվեցին մի կողմ, ցրվեցին ափում  
և մեծ մասամբ վագեցին այն տեղ, վորտեղ առաջ նավակ-  
ներն էին կանգնած: Նավակները չկային: Չորսուրի տղա-  
ները տարել էին նրանց ուրիշ տեղ: Փախչելու վոչ մի  
տեղ չկար: Իսկ հեծելագորայինները նետվում էին ամեն  
կողմ փախստականների վրա և անողորմաբար տապալում  
էին նրանց, համարյա չհանդիպելով վոչ մի դիմադրու-  
թյան: Շատերը նետվեցին գետը, հուսալով լողալով անց-  
նել մյուս ափը, սակայն շատ քշերին հաջողվեց հասնել.  
մեր գնդացիքը կրակում էր ջրի վրա և շոշափում փախս-  
տականներին — նրանցից շատերն իջան Պրոտոկա գետի  
հատակը: Գրգռված Չորսուրը քշում էր ափով, նա ինքը չէր  
կոտորում և չէր հետապնդում — միայն մարտիկներին  
ցույց էր տալիս, թե շվարած թշնամին վորտեղ էր թագն-  
վում, ուր էր փախչում կուլտերով: Չորսուրը բոլորը տես-  
նում էր և մի անգամից նկատում բոլոր կողմերում — թե

ինչպես էր պրպտում թշնամին և վորտեղ էր նա փրկու-  
թյուն վորոնում:

Տախաստանային վայրերի հեծվորի պես Տանչուկը մեր-  
կացած սրով սլանում էր մի ճայրից մյուսը: Նա արդեն  
վաղուց էր կորցրել իր գլխարկը, գանգուր մագերը քամին  
շաղ էր տալիս:

Նա չգիտեր և չէր լսում վոչ մի հրաման. ինքն էր իր  
զոհին ընտրում և հարձակվում նրա վրա վորպես ուրուք,  
անողոք կերպով տրորում և կտրատում էր: Յեվ յերբ ամեն  
ինչ արված էր, հենց իր հրաձիգի մոլորված գնդակը կոտ-  
րեց Տանչուկի ձախ ձեռքը: Նա չբղավեց, չհառաչեց —  
միայն շատ պինդ հայհոյեց և վայր իջավ իր հավատարիմ  
«Յուսից»: Կոտորածը վերջացավ...

Թե ինչքան մարդ կոտորվեց այդտեղ, ինչքան վոչն-  
չացավ Պրոտոկա գետի հատակում — դա հավիտյան ան-  
հայտ կմնա: Միայն առանձին փախստականներ կարո-  
ղացան հասնել մինչև յեղեգնուտը և թագնվել այնտեղ —  
իսկ մեծամասնությունը վոչնչացավ փախուստի ժամանակ:  
Պատահում էր, վոր սպիտակ գվարդիական ոֆիցերները  
կանուցի շոր էին հագնում, փորձելով այդպիսով պահվել  
յեղեգնեղում, բայց հեծելագորայինները վոչ վոքի չէին  
բաց թողնում, բռնում էին դիմակավորվածներին և հենց  
այդտեղ, տեղում «թողնում»: Յերկու ժամ հետո գյուղը  
գտնվում էր կարմիր դուսանտի ձեռքը:

Կովի սկզբում յեկեղեցու հրապարակից բարձրացավ  
թշնամու սավառնակը և թռավ Նովո-Նիկոլայևսկի ուղ-  
ղությամբ (25—30 վերստ դեպի արևելք), վորտեղ գտնը-  
վում էին սպիտակ զորամասերը: Թե կովի ժամանակ,  
թե նրանից հետո գյուղի այգիներից և բանջարանոցներից,  
տանիքներից, խոտի դեղերի հետևից և բարձր խոտի մի-  
ջից թռչում էին պատահական գնդակներ. այդպես ան-  
հյուրասեր էր ընդունում գյուղը կարմիր հյուրերին:

Այդ առավոտյան կովում բռնեցինք մոտ հազար գերի,  
40 ոֆիցեր, զրահապատ ավտոմեքենա, գնդացիներ, հրա-  
ցաններ, ռուսներ, դեղորայքի գումակը, կնիքներ, զրա-  
սենյակներ, ոֆիցերների անձնական փաստաթղթեր և այլն:

Այդ ժամանակ շոգենավերն ու բարկասները մոտեցան հենց գյուղին: Բեռնավեցին գերիններն ու ավարը. հենց այդտեղ պատգարակների վրա հավաքվել էին վերավոր կարմիր բանակայինները, վորոնք մեծ մասամբ տուժել էին սվինամարտում:

Այնուհետև բոլորովին պարզ եր, վոր թշնամին սավառնորդից լուր ստանալով փորձանքի մասին իր թիկունքում, աշխատելու յե կամ բոլորովին հեռանալ կամ գյուղ ուղարկել ուժեղ զորամաս, վորը կարողանա գլուխ հանել կարմիր դեսանտի հետ:

Թշնամին ընտրեց առաջինը. իր զորամասերին դիրքերից հանեց և Նովո-Նիկոլաևսկից (այնուհետև մյուս կետերից) շարժվեց դեպի Նովո-Նիժեատբերլիսկ, վախենալով թե վերջնականապես կկտրվի ծովից: Այդտեղից նրա միակ ձանապարհն եր դեպի Աչուև, և նա շտապում եր անցնել այդ ձանապարհով, քանի կարմիր դեսանտն ինչպես պետք ե, չեր ամրացել այդտեղ և դեռ չեր լրացվել նոր, կարող ե պատահել հետևից նավով յեկող զորամասերով:

Թշնամու ֆրոնտն այդ ժամանակ ձգվում եր հետևյալ գյուղերի ուղղությամբ, — Չերալոգա, Ստարո-Չերելիևսկայա, Նովո-Նիկոլաևսկայա, Պիսկունովո, Բաշտի, Ստեպնայ և Չուրովո:

Արդեն շարժվեցին թշնամու դիրքերը, նա տեղից հանվեց և արագորեն գլորվեց դեպի ծովը: Թշնամին հեռաջարկեց, իսկ այդ ժամանակ մեր գլխավոր ուժերը, վոր կանգնած էին թշնամու դիրքերի հանդիման, սկսեցին հետապնդել և թակել դեպի ծովը նահանջող թշնամուն: Կարմիր դեսանտի գրաված գյուղում կռիվը չվերականգնեց մինչև այն ժամանակ, յերբ Նովո-Նիկոլաևսկից հասան նոր սպիտակ զորամասերը:

\* \* \*

Նրանցից առաջինը՝ կուբանյան միացյալ հեծելազունը, պոլտավյան հետևակ և զապորոժյան գնդերը, գեներալ Նաուսկոյի անհայտ զորամասը և գեներալ Բաբիևի հեծյալ կորպուսի զորամասերը, վորոնց միջև նաև Շկուրոյի գայլի



գիվիզիոնը: Կարմիր դեսանտին չափազանց դժվար եր գի-  
մադրել այդպիսի խոշոր ուժերի ճնշմանը. նրա խնդիրն  
այժմ այն եր, վոր ամեն կերպ գիմանա մինչև մեր գլխա-  
վոր ուժերի գալը, ամբողջ ժամանակ հուզել թշնամուն,  
քայքայել նրա շարժումը, հաճախակի մարտական ընդհա-  
րումներով անհանգստացնել նրան և լարված դրուժյան մեջ  
պահել: Կեսորին գերազանց ուժերի ճնշման տակ, մենք  
ստիպված եյինք մաքրել յերկու ծայրափողոցները, վորոնք  
ձգվում եյին արևելքից արևմուտք. այդ փողոցներով ան-  
ցան թշնամու գլխավոր ուժերը: Նորից կռիվը բռնկեց:

Թշնամին գործի դրեց յերկու զրահապատ ավտոմեքենա-  
ներ: Բայց նրա դրուժյունն ընդհանրապես չափազանց  
բարդ եր. ճնշելով կարմիր դեսանտին, նա միևնույն ժա-  
մանակ չեր կարող նրա վրա կենտրոնացնել իր բացառիկ  
ուշադրությունը և գյուղում հիմնական կռիւ բռնվել. այդ  
բանը կարող չեր անել նա, քանի վոր մեր գլխավոր ու-  
ժերը հետապնդում եյին և ճնշում նրան, դուրս գալով  
նրա հետևից իրենց դիրքերից: Արդեն հեռվում, Նովո-Նի-  
կոլաևակի կողմից լավում եր հրետանային կրակոց, զրանք  
կարմիր բրիգադի մարտկոցներն եյին, վորն շտապում եր  
միացնել իր գործողությունները կարմիր դեսանտի գործողու-  
թյուններին: Մոտավորապես ժամի չորսին գյուղի մոտ  
կուտակվել եյին թշնամու շատ ուժեր: Ըստ յերևույթին,  
այնտեղ վորոշված եր վերջ տալ կարմիր դեսանտին և  
չպրտել նրան Պրոտոկա գետը: Թշնամին բաց արեց փո-  
թորկային հրետանային կրակ և շղթա կազմած դիմեց  
հարձակման: Այդ ակտիվ և բուռն շարժումն ստիպեց մեզ  
ընկրկել դեպի գետը:

Ահա կարմիր մարտիկները թողին բացատը, հեռացան  
գետակի այն կողմը, իսկ թշնամին գալիս ե ու գալիս...

Պարզ եր, վոր հետագա նահանջի դեպքում մեր դե-  
սանտը կարող եր ամբողջովին վոչնչանալ:

Հրետանու հրամանատար ընկեր կուլբերգն արդեն ամ-  
բողջ յերեք ժամ չեր յջնում կազնի ծառից: Նա տեղա-  
վորվել եր այնտեղ, վերին ճյուղի վրա, ինչպես բու, քրտ-  
նաթոր ճակատը հենել եր խոնավ ցուրտ բնին և շարու-

նազ նայում եր հեռադիտակով, թե ինչպես են ընկնում մեր ուումբերը: Մարտկոցը կանգնած եր այդտեղ, մի քանի քայլ հեռու, և Կուլբերգը կաղնու վրայից ուղղում եր կրակոցը, հրաման տալով:

— Սողովակը 100, նշանը 95... խողովակը 100, նշանը 97...

Յե՛վ յերբ հրեշը թնդում եր, և ուումբը ճչալով ու հառաչելով պոկվում եր հրանոթի բերանից, Կուլբերգը բացականչում եր և ձեռքն ուղղում եր այնտեղ, վորտեղ ծածկվում եր ուումբը:

— Հիանալի յե, հիանալի յե,—բղավում եր նա վերևից,— հենց կոկորդը ծեփեց... Ապա, ելի այդպիսի մի ուումբ... Աշխուժ, տղաներ, ավելի աշխուժ... Տեսնո՞ւմ ես, փախան,— և նա հեռադիտակի միջով հայացքը բեռեց բացատի ծայրը, վորտեղ բարձրանում էյին փոշու սյուները, իսկ նրանցից խույս էյին տալիս մարդիկ ամեն կողմ և փախչում էյին:

— Ելի մի բաժակ,—շարունակում եր նա բղավել վերևից, յերբ հրետավորներն շտապ լցնում էյին հրանոթը մեկը տալիս եր ուումբը, մյուսը խողովակի մեջ եր քշում, յերրորդը հարվածում եր: Այդպես տենդագին ումբակոծության մեջ Կուլբերգը մոռանում եր ժամանակի և հոգնածության մասին, մոռանում եր ամեն բանի մասին... Յե՛վ այժմ, յերբ թշնամին հարձակվում եր և հետզհետե ավելի յեր մոտենում այն տեղին, վորտեղ կանգնած եր մեր մարտկոցը,—Կուլբերգը չե՛ր ել մտածում շարժվել, կարծես կպել եր կաղնու ճյուղին:

Ավելի խիստ, ավելի բուռն են դառնում նրա հրամանները, նա ավելի հաճախ ե փոխում նշանը, ավելի բարձր ե տալիս հրամանը... Իսկ հրանոթների կողքին — շնչապառ, հոգնած հրետավորներն ել ավելի աշխուժ, հաճախ են տալիս ուումբերը, խփում են վրա յեկող թշնամուն...

Մարզագետնում, դեպի Պրոտոկա գետի յելքը, վորտեղ միանում են յերկու ճանապարհները, յեղեգնուտից վոչ հեռու, զրվեցին գնդացիները, և գնդացիբայինների առաջ խնդիր զրվեց — կամ վոչնչանալ, կամ հետ պահել թշնամու գրոհող շղթաները:

Գնդացիբային ձիերը դուռնչերը դարձրել են դեպի գետը: Սայլակների վրա, վահանիկների հետև կորացել են գնդացիբայինները: Մենք ձիերը նստած նրանց հետևում պահում ենք նահանջող շղթաները: Տեսնում եմ Կոցյուբենկոյին — նա կարծես ձուլվել ե գնդացիբային, նա յերկու ձեռքով կպել ե նրան, պտտեցնում ե, ստուգում դողացող մասներով — արդյոք ամեն բան կարգին ե:

Թշնամին աչքի առաջ ե, նա դարձյալ այնպես անզուսպ շարժվում ե առաջ:

Դեհ, կեցցեք, գնդացիբայիններ, այժմ ամբողջ հույսը ձեզ վրա յե. յեթե դիմացաք — մենք կդիմանանք, իսկ յեթե թշնամուն չկարողանաք կանգնեցնել — առաջինը դուք կվոչնչանաք թշնամու սվինների տակ: Ինչքան արդեն մոտ են թշնամու շղթաները: Ահա, նրանք կխուժեն մարզագետինը...

Այդ ժամանակ, անմոռաց վողբերգական ըոպներին, յերբ դեսանտի վիճակը մազից եր կախված, գնդացիբայինները բաց արին անասելի, ավերիչ կրակ:

Անցնում են մեկ... յերկու ըոպե...

Տարերային թափով դեռ առաջ են շարժվում թշնամու շղթաները, բայց արդեն նրանք ցնցվեցին, հետո կանգ առան, պառկեցին... Յե՛վ հենց վոր բարձրանում էյին, նրանց հանդիպում եր նույն անասելի կրակը...

Դրանք բեկման ըոպներ էյին — վոչ թե ըոպներ, այլ ակնթարթեր: Կարմիրների շղթաները կանգ առան, խրախուսվեցին և իրենք դիմեցին հարձակման: Գործի անսպասելի շրջադարձը թշնամուն մոլորեցրեց և սպիտակներին շղթաներն սկսեցին նահանջել: Դրուժյունը վերականգնեց:

Այդ ժամանակ թշնամու գործերի գլխի վրա յերևացին պայթող շրապնելի ամպիկները: Չի կարելի նկարագրել այն ուրախությունը, վորն ընդգրկեց մարտիկներին և հրամանատարներին, յերբ նրանք տեսան այդ սպիտակ ամպիկներն իրենց կարմիր բրիգադի ումբակոծությունից. այդ մերոնք էյին գալիս ոգնության, նրանք արդեն շատ մոտիկ են, նրանք թույլ չեն տա, վոր վոչնչանա մեր դեսանտը...

Կարմիր բանակայինները խրախուսված և ուրախ, նորից սկսեցին անհանգստացնել անցնող թշնամու զորքերին:

Այդպես շարունակվեց մինչև գիշեր, մութն ընկնելը: Մենք փորձեցինք կապվել մոտեցող կարմիր բրիգադին, բայց փորձերը զուր անցան. մեր դեսանտի և մոտեցող կարմիր զորամասերի միջև գտնվում էին թշնամու հոծ մասսաները: Ճահճուսները և դեսախորշերը թույլ չեցին տալիս միանալ շրջանցով:

Թշնամին վորոշեց գիշերը մնալ գյուղում, վորպեսզի հնարավորութուն տար իր անվերջ գումակին հեռանալ դեպի ծովը:

Կարմիր դեսանտը վորոշեց կատարել գիշերային գրոհ: Յեկեղեցու հետևում, գյուղի հրապարակից վրչ հեռու, խիտ այգում, Չորտը թագցրել էր իր եսկազրոնը վորպես պահակ: Նրա համար նորից գործ կար նոր պայմաններում, խուլ կես գիշերին: Մարտիկները տեղավորված էին խոտերի մեջ, լուռ պառկած էին:

Չիերը կապված էին այգու մեջտեղում ծառերին: Ծայրի ծառերի վրա, ցանկապատի մոտ ամենուրեք ճյուղերում թագնվել էին դիտողները: Չորտան անցնում էր այգու մի ծայրից մյուսը, լուռ նայում էր պառկած մարտիկներին, ձիերին, ստուգում էր ճյուղերին նստած պահակներին:

Վտակների ափին և հեռուն ծառուղում պառկած էին մեր գումարտակները: Բոլորն արդեն տեղեկացան պատրաստվող գիշերային գրոհի մասին: Մենք կովայուլսի հետ պառկած էինք խոտի դեզի տակ, կանչեցինք հրամանատարներին, անցկացրինք փոքրիկ խորհրդակցութուն: Այդ ժամանակ շոգենավից բերին մեծ չուգունե կաթսան կերակրով — բարձրացանք, շրջան կազմեցինք, ինչպես սոված գայլեր, ընկանք կերակրի վրա — առավոտից մինչև հիմա բերաններս մի կաթիլ բան չեք մտել: Դեզի մոտ կանգնած մարտիկները հետզհետե մոտեցան — կերակուրն իր գործը տեսնում էր և մագնիսի պես իրեն էր ձգում: Բայց զժբախտությունն այն էր, վոր գզալ չկար. յերկու անպեսք, կրծոտված գզալները բոլորին չեցին բավակա-

նացնում: Բայց դրա ճարն էլ գտանք. վորը դանակով, վորը հենց նոր տաշած փայտե թիակով կաթսայից ուղղակի բերանն էր թոցնում: Շուտով ամբողջ կաթսան դատարկեցինք մինչև տակը: Ծխեցինք, Ռւրախացանք: Առույզացանք:

Վորոշված էր ուղիղ կես գիշերին գրոհի դիմել, իսկ այգում թանգված եսկազրոնին հանձնարարվեց անհրաժեշտ բոպեյին դուրս ցատկել պահակատեղերից և հարձակումով թշնամու շարքերում խուճապը մինչև վերջը հասցնել:

Կարգ կանգնեցրինք քաջերին, հանձնարարեցինք նրանց սողոսկել գյուղի խորքը և ժամի 12-ին հրկիզել հինգ տնակ, իսկ ավելի մեծ տպավորության համար, հենց վոր հրդեհը բռնկի — ումբեր ձգել:

Չենց առաջին կրակների հետ պեսք է միանգամից խփեն բոլոր հրանոթները, գործեն բոլոր գնդացիները, իսկ հրաձիգները, տալով մի բանի համազարկեր, պեսք է բարձրաձայն «ուռա» կանչեն, բայց կովի չբռնվեն, մինչև թըշնամու գրությունը չպարզվի:

Վրա հասան սպասողական մեռած բոպեները: Շուրջը՝ թե մեզանում, թե թշնամու մոտ լուռ է: Այդպիսի մութ գիշերներին դժվար էր գրոհ սպասել: Թվում էր, թե մարդիկ ման են գալիս մասների ծայրերին:

Խոսում էին շուկով: Բոլորն սպասում էին: Ահա յերբացին առաջին կրակները, գյուղից սլացան վեր կարմիր լրաբերները, միանգամից բռնկեցին մի քանի տնակներ:

Միևնույն ժամանակ կարմիր մարտիկների ականջին էին հասնում խուլ պայթյունները — դրանք մեր հրձիգներն էին ումբեր նետում:

Անկարելի չե խոսքերով նկարագրել, թե ինչ պատահեց մի ակնթարթ հետո: Միանգամից վորոտացին մարտկոցները, խոսեցին գնդացիները, շտապում, մեկը մյուսի հետևից պոկվում էին համազարկները:

Ինչ վոր սառցե, խենթ «ուռա» յեր թափանցում գիշերվա մեջ և դաժանորեն շաղափում էր նրան: «Ուռա... ուռա» — իջնում էր գյուղի վրա սարսափելի սպառնալիքը:

Թշնամին չզիմացավ, ձգեց բռնած տեղերը և սկսեց փախչել: Այդ բուպեյին պահակատեղից դուրս թռավ այնտեղ թագնված հեծելազորային եսկազրոնը և պատկերը լրացրեց:

Այրվող տնակների ցուլքի տակ այդ արշավող հեծելազորայինները մերկացած սրերով, այդ շփոթված, շփառած մարդիկ ուրվականներ եյին թվում: Թշնամին դիմադրում էր անկանոն, անկազմակերպ, կրակ էր բաց անում, բայց չէր տեսնում իր թշնամուն, փորձում էր մնալ, բայց չգիտեր, թե վորտեղ են իր ուժերը, ինչպես և վորտեղ հավաքել նրանց: Փողոցային կռիվը յերկար չչարունակվեց:

Գյուղը նորից ամբողջովին մարրվեց:

Թշնամին գյուղի ծայրում ցրվեց ճահճուտներում և լեղեգնուտում. միայն առավոտյան հավաքեց մնացած ուժերը, բայց այլևս գյուղին չմտեցավ, այլ ուղղվեց դեպի ծով:

Դեռ գիշերը, կովից անմիջապես հետո, մեր պահակները գյուղ մտան, բայց ամբողջ դեսանտն այնտեղ մտավ միայն արշալույսին: Նորից տեղի ունեցավ կրակոց բանջարանոցներից և այգիներից, նորից անբարեցակամ դիմավորեցին գյուղացիները կարմիր յեկվորներին...

Յերբ լուսացավ, սկսեցին հավաքել և դեպի բարկաաներն ուղարկել նոր ավարները — զրահապատ ավտոմեքենան, գեներալական ավտոմեքենաները, գնդացիները, դիրքային հրանոթները, ռումբերը, հրացանները, գնդացիները...

Այդ ժամանակ Նիկոլայի կողմից գյուղ մտավ կարմիր բրիգադը — հենց նրան հանձնարարվեց փախչող թըշնամուն հետապնդելու հետագա խնդիրը: Դեսանտն իր խնդիրը վերջացրեց:

\* \* \*

Ուրախ, յերգելով լցվեցին կարմիր բանակայինները բարկաաները, վորպեսզի վերադառնան:

Յուրաքանչյուրը հասկանում էր, թե ինչպիսի մեծ և անհրաժեշտ գործ է կատարված: Յուրաքանչյուրը դեռ ապրում էր խորը դրամատիկական տպավորությունների մնացորդները...

Նավերն արձակվեցին գետափից... Բարձր յերգերն արթնացրին գետախորշերի և յեղեգնուտի լուռթյունը: Հենց այդ տեղերի մոտով յերեկ միայն, արշալույսին, խորը սեվ մշուշում, գերեզմանային լուռթյան մեջ լողում եյին նավերը կարմիր մարտիկներով... Դեռ այն ժամանակ վոչ վոք չգիտեր, թե ինչ հետևանք կունենա համարձակ գործողությունը, վոչ վոք չգիտեր, թե ինչ է սպասում իրեն գետափին:

Այժմ, հետ լողալիս, մարտիկների շարքերից պակասում եյին մի բանի տասնյակ լավագույն ընկերներ:

«Բլազոդետելի» վերին տախտակամածում, մահճակալի վրա պառկած է դժգույն Տանչուկը շարված ձեռքով և կամացուկ տնքում է: Յեղբայրական արձակ գերեզմանում, հենց յեղեգնուտի մոտ, հավիտյան քնով հանգստանում է յերկաթյա հրամանատար Լեոնտի Շչոտկինը:

Յերբ հիշեցինք զոնված ընկերներին, բոլորս լոբեցինք, կարծես ծանր մտքերն սպանում եյին կենդանի խոսքը: Իսկ հետո, յերբ լուռթյունն անցավ, — նորից ծիծաղ, յերգ, նորից ուրախություն, կարծես թե վոչինչ չէր յեղել այդ անցած օրերն ու գիշերները:



Портрет Дм. Фурманова работы худ. Э. В. Нусберга.  
Иллюстрации художника С. Королькова.

Отв. ред. Г. А. Потенц. Пом. тех. ред. Д. М. Джинибалаян.  
Издание 508/4768. Объем 2½ печ. лист. Статформат А5—148x210. Упол-  
крайлит Р—2456. Тираж 1500 экз. Заказ № 5200. Сдано в набор  
3-ХІ-1935 г. Подписан в печать 19-ХІІ-1935 г.

Типография им. Стачки 1902 г. Ростов на Дону

ՀՀ Ազգային գրադարան



NL0311896

Գրկ. 75 ԿՊՐ.  
Цена 75 коп.

27823

На армянском языке

ДМ. ФУРМАНОВ

**КРАСНЫЙ ДЕСАНТ**

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО  
Ростов н-Д. Буденновский пр., № 30

Պ Ր Ո Պ Ո Ն Օ Ր Ց  
Ուսումի-Դո՞ւր, Մոսկվայից, № 58  
Գ Ր Ա Կ Ե Ն Տ Ր Ո Ն (ԿՆԻՊՈՅԵՆՏՐ)